

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԱՄՄԻԿ ՀԱՅԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՀՈՄԱՆԻՇԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ժ.02.08 - «Ռոմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական  
լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Ա. Կ. Բարլեզիզյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Վ. Գ. Համբարձումյան

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
Ռ. Ս. Սելիքսեթյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան պետական  
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 29-ին՝  
ժամը 14.30-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009  
«Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ Երևան,  
Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 28 -ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ.Երզնկյան

Հայտնի ճշմարտություն է, որ լեզվի հարստացումը նախ և առաջ նոր բառերի, բառիմաստների, արտահայտությունների ու դարձվածքների երևան գալու շնորհիվ է իրականանում, իսկ որևէ լեզվի կատարելության աստիճանը չափվում է նրա բառապաշարային ներուժով:

Նորաբանությունների ուսումնասիրությունը կարևոր է ինչպես պատմական-հասարակական, այնպես էլ մշակութային-ճանաչողական և, անշուշտ, լեզվաբանական քննության տեսանկյունից: Նորաբանությունների աղբյուրներն ու յուրահատկություններն ուսումնասիրելուց ու դասակարգելուց բացի, նորագիտությամբ զբաղվող մասնագետի առջև ծառանում է կարևոր մի խնդիր ևս, ֆրանսիացի լեզվաբանների ձևակերպմամբ՝ **Նորաբանությունների հանրայնացման** խնդիրը (socialisation des néologismes), այսինքն՝ թե ինչպես են վերջիններս մուտք գործում և ամրանում (կամ՝ ընդհակառակը) տվյալ լեզվի հոմանիշային շարքերի ու իմաստային ենթահամակարգերի մեջ, ինչ չափով են ընդունվում ու յուրացվում հանրության կողմից:

Նորահայտ բառերն ու արտահայտությունները մեծ մասամբ կազմվում են լեզվում առկա բառերի, բառահիմքերի ու կաղապարների միջոցով: Ասվածը, սակայն, առավելապես վերաբերում է գրական լեզուներին: Լեզվի զարգացումն ավելի լայն ու համապարփակ, մասնավորապես հանրալեզվաբանության լույսի ներքո քննելիս պարզ է դառնում, որ ժամանակակից խոսակցական ֆրանսերենն իր տարաբնույթ լեզվախոսական ոճերով ի հայտ է բերում յուրահատուկ դրսևորումներ, որոնք արժանի են առանձնակի ուշադրության: Լինելով լեզվի կառուցվածքի ամենագայուն ու հարափոփոխ մասը՝ ֆրանսերենի բառապաշարն այսօր թույլ է տալիս արձանագրել ուշագրավ միտումներ՝ արագ զարգացում, հարուստ հոմանիշություն, ինչպես նաև արտահայտչամիջոցների վաղանցիկություն ու նորանոր բառամիավորների ստեղծում:

Ֆրանսերենի բառապաշարը հարստացել ու բուռն զարգացում է ապրել նամանավանդ Վերածննդի, Լուսավորության ու Ֆրանսիական Մեծ հեղափոխության դարաշրջաններում և XIX դարում: Սակայն լեզվաբանների միահամուռ կարծիքով «ամենանորաբան» շրջանը XX դարի վերջին տասնամյակներն ու XXI-ի առաջին տարիներն են:

Բնական է, որ բառապաշարային նորաբանությունների բազմապատկումը չի կարող տեղաշարժեր չառաջացնել ֆրանսերենի իմաստային համակարգում, մասնավորապես՝ հոմանիշային շարքերում, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի իմաստաբանական, գործաբանական և ոճաբանական գործոնների հարաբերակցության առումով:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է նրա արդիականությամբ, քանի որ ժամանակակից ֆրանսերենի բառա-

պաշարի համալրման մեջ իրենց տարաբնույթ առանձնահատկություններով անվիճելի դերակատարում ունեն հատկապես լեզվախոսակցական ցածր ոճերը, որոնք կազմում են սույն աշխատության առանցքային թեման և շարունակական հետազոտությունների, լրացումների ու ընդհանրացումների կարիք ունեն:

Ֆրանսերենի զարգացման ներկա փուլում խնդիրը գտնվում է ոչ միայն լեզվաբանների, այլև մտավորականության լայն շրջանակների ուշադրության կենտրոնում, որոնք նախանձախնդիր մտահոգությամբ հետևում են համազգային լեզվի բառապաշարային արտահայտչամիջոցների հարստացման ընթացքին:

Ատենախոսության օբլեկտը ժամանակակից ֆրանսերենի բառափմաստային համակարգն է, իսկ առարկան խոսակցական ֆրանսերենի ցածր ոճերի բառակազմը, որն անընդհատ փոփոխվում ու նոր երանգներ է ստանում: Առանձնապես կարևորվում է լեզվախոսական «ստորին» ոճերի (խոսակցականի «ցածր» ենթաոճերի) հարաբերակցությունը համընդհանուր ժողովրդախոսակցականի ու վերջինիս միջոցով գրական ֆրանսերենի հետ:

Յետազոտության նպատակն է հնավորինս համապարփակ ընդգրկումով ներկայացնել ծածկալեզուն (արզոն) իր այսօրվա ընկալումով ու մեկնաբանությամբ, նրա տարատեսակները (langue des jeunes - երիտասարդների լեզու, langue des banlieues et des faubourgs - արվարձանների ու ծայրամասերի լեզու, langue des cités - ավանների լեզու, langue scolaire - դպրոցականների լեզու, langue branchée - մոդայիկ լեզու, langue des immigrés - ներգաղթյալների լեզու և այլն), բացահայտել վերջիններիս կիրառության ընդարձակման ու տարածման դրդապատճառները ժամանակակից ֆրանսերենում:

Սույն նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ մասնավոր խնդիրները.

- ճշտել «լեզվախոսական ոճ» հասկացության էությունը,
- բացահայտել լեզվախոսական «ստորին» ոճերի գոյության ու տարածման նախադրյալները,
- համակարգել ժամանակակից ֆրանսերենի նորաբանություններն ըստ լեզվախոսական ոճերի,
- պարզել հոմանիշային նորաբանությունների կառուցվածքափմաստային և հարանշանակային առանձնահատկությունները,
- վերհանել հոմանիշային շարքում առկա հիմնաբառը, քննել լայնույթի (ամպլիտուդա) խնդիրը հոմանիշային շարքում և մեկից ավելի հիմնաբառերի (հենաբառերի) հնարավոր գոյության փաստը,
- նկարագրել լեզվախոսական ցածր ոճերին պատկանող նորաբանությունների առաջացման աղբյուրներն ու կազմության եղանակները:

Աշխատանքի ընթացքում դիմել ենք ուսումնասիրության հետևյալ մեթոդներին.

- լեզվաբանական գրականության քննական ուսումնասիրություն,
- բառարանային սահմանումների վերլուծություն,
- փաստացի լեզվանյութի որակական և վիճակագրական տվյալների հետազոտություն,
- հանրալեզվաբանական և լեզվաոճական քննություն:

Ատենախոսության գլխական նորույթը «լեզվախոսական ոճ» հասկացության ներմուծումն է մասնագիտական գրականություն ստյուրյան լեզվաբանական ուսմունքի հիման վրա, այդ հասկացության մեր անձնական ըմբռնումը, նրա տարբերությունը ավանդաբար ընդունված և ամրագրված լեզվական ոճերից, ինչպես նաև ֆրանսերենի իմաստային ենթահամակարգերում, մասնավորապես հոմանիշային շարքերում նորաբանությունների ընդգրկման հետևանքով առաջացող տեղաշարժերն ու շարքի հիմնաբառի (հիմնաբառերի) խնդրի բացահայտումը:

Ատենախոսության տեսական նշանակությունը լեզվախոսական ցածր ոճերի ուսումնասիրության միջոցով արծարծվող խնդիրների ճշգրտումն ու սեփական տեսակետների շարադրումն է, որոնք կարող են իրենց նպաստը բերել բառագիտական ու ոճաբանական արդի հետազոտություններին և լրացուցիչ տվյալներով հարստացնել հոմանիշությանը վերաբերող տեսական խնդիրների մեկնաբանությունը, ընդլայնել լեզվին առնչվող ներքին և արտաքին երևույթների փոխադարձ կապի մասին ժամանակակից պատկերացումները:

Աշխատանքի գործնական արժեքը նրանում առաջ քաշված դրույթների և փաստացի նյութի հնարավոր կիրառումն է բառագիտության և ոճաբանության բուհական դասագրքերում, ձեռնարկներում, հատուկ դասընթացներում ու դասախոսություններում մասնավորապես «հոմանիշություն» և «հոմանիշային նորաբանություն» բաժիններում, ինչպես նաև հոմանիշային նոր բառարանների ու բառացանկերի ստեղծման աշխատանքներում:

Ուսումնասիրությունը կատարվել է խոսակցական ֆրանսերենի հատուկ բառարանների, ինչպես նաև ժամանակակից ֆրանսերենի՝ հեղինակություն վայելող ընդհանուր բառարանների նյութի հիման վրա: Դիտարկել ենք նաև վերջին տարիներին նկարահանված ֆրանսիական մի շարք կինոսցենարների լեզուն, որոնցում առկա են խոսակցական ֆրանսերենի ցածր ոճերին բնորոշ ցայտուն մոտիվներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գլխական գրականության, բառարանների և էլեկտրոնային կայքերի ցանկերից:

Առաջին գլուխը, որ վերնագրված է «Բառային հոմանիշություն և հոմանիշային նորաբանություններ», բաղկացած է չորս ենթագլխից և նվիրված է հոմանիշությանն առնչվող այնպիսի կարևոր հարցերի արծարծմանը, ինչպիսիք են հոմանիշների մասին տեսության սկզբնավորումն ու հոմանիշային բառարանագրության ստեղծումը Ֆրանսիայում, լեզվաբանության մեջ հոմանիշության ըմբռնմանը վերաբերող տեսակետներին, հոմանիշության իմաստաբանական չափանիշներին և հոմանիշային նորաբանության ընդհանուր բնութագրին արդի ֆրանսերենում:

Դասական ըմբռնումով հոմանիշների պատմությունը սկսվում է Արիստոտելից: «Կատեգորիաներ» աշխատության մեջ նա առաջին անգամ նշում է հոմանիշների գոյության փաստը:<sup>1</sup>

Հոմանիշության վերաբերյալ առաջին հրատարակումներն ի հայտ են գալիս XVIII դարում: Հոմանիշության տեսությունը նախ զարգանում է փաստացի նյութի ընտրության միջոցով: Այդ պատճառով հոմանիշության վերաբերյալ առաջին աշխատությունները համարվում են հոմանիշային բառարանները, իսկ առաջին «տեսական հետազոտությունները»՝ դրանց առաջաբանները:

Եվ քանի որ ֆրանսերենի լեզվական կանոնը առաջիններից էր, որ կազմավորվել էր Արևմտյան Եվրոպայում, ապա ֆրանսերենի բառարանագրությունն էլ հարուստ պատմություն ունի: Արդեն XVII դարի սկզբին ֆրանսիացի բառարանագիրները երկլեզվյան բառարաններից անցնում են բացատրական բառարանների կազմությանը:

Հենց բացատրական բառարանների ստեղծումն էլ ցույց տվեց, որ շատ բառեր ունեն նման, գործնականում՝ նույնական իմաստ: 1718թ. Ֆրանսիայում լույս է տեսնում աբբա Գաբրիել Ժիրարի առաջին հոմանիշային բառարանը. «La Justesse de la langue française ou les Différentes significations des mots qui passent pour être synonymes»:<sup>2</sup> Այս բառարանը հանրածանոթ էր Ֆրանսիայում և նրա սահմաններից դուրս:

Գ.Ժիրարի բառարանը, լինելով նորարարական մի աշխատություն թե՛ տեսական և թե՛ գործնական առումներով, պատահաբար չէր երևան եկել Ֆրանսիայում XVIII դարում: Այն Լուսավորության ժամանակաշրջանի փիլիսոփայական մտքի, գոյություն ունեցող աբսիուդների վերլուծության ու վերանայման, լեզվաբանության նկատմամբ աճող հետաքրքրության դրսևորում էր: Հոմանիշները դադարում են միևնույն նշանակությունն ունեցող խոսքի զարդարանքներ դիտվել, որոնք օգտագործվում են լոկ կրկնություններից խուսափելու համար: Հոմանիշների բնորոշման մեջ առաջին պլան են մղվում հատկապես

<sup>1</sup> **Аристотель.** Метафизика. Соч. в 4-ч томах. М., 1976, т.1.

<sup>2</sup> **Girard G.** Dictionnaire des synonymes. P., 1718.

նրանց միջև եղած տարբերությունները (այս մասին խոսվում է Դիդրո դ'Ալամբերի հայտնի հանրագիտարանի «Հոմանիշներ» բառահոդվածում):<sup>3</sup>

Հոմանիշության վերաբերյալ հետագա հետազոտությունները հետևում են Գ. Ժիրարի կողմից առաջ քաշված սկզբունքներին: Ֆրանսիայում շարունակում է զարգանալ հոմանիշային բառարանագրությունը ( Լիվուա 1967, Բոգե 1769, Ռուբո 1785, Սորեն 1801, Գիզո 1809, Լավո 1826, Լեպան 1828 )<sup>4</sup>: Սակայն այս բառարանների հիմքը շարունակում է մնալ վանահայր Գ. Ժիրարի աշխատությունը: Այդ բառարաններն առաջարկում էին համարժեք բառերի (հոմանիշների) հավաքածու՝ առանց ճշտելու դրանց նշանակությունները (օրինակ կարող են ծառայել նաև Է.Գ. Բառի<sup>5</sup>, ինչպես նաև Ռ. դե Նոտերի, Դ. Վիյերմոզի և Ա. Լըկյուիյեի ժամանակակից բառարանները<sup>6</sup> նախատեսված հիմնականում դպրոցականների համար, և որոնց խնդիրն է ներկայացնել բառերի առավել լայն ընտրություն՝ խոսքի հարստացման և համատեքստում տվյալ բառի փոխարինման համար, առանց բացահայտելու դրանց իմաստային և այլ նրբերանգները: Սակայն հարկ է նշել, որ XIX դ. կեսերին, հոմանիշների տեսության զարգացման արդյունքում զուգահեռաբար ու աստիճանաբար ծնվում է հոմանիշների բառարանի նոր տեսակը: Այդ ընթացքում ստեղծվում է հոմանիշների ընդհանուր տեսական հիմքը: Նրա կարևորագույն սկզբունքներից մեկն այն է, որ չնայած հոմանիշների նմանությանը, նրանց մասին չի կարելի խոսել առանց հաշվի առնելու առկա տարբերությունները: Նոր հոմանիշային բառարանները (օրինակ՝ Է. Ժենուվրիեի, Յ. Դեզիրայի, Տ. Օրդեի բառարանը)<sup>7</sup> հաշվի են առնում այդ սկզբունքը և յուրաքանչյուր բառ ներկայացնում իմաստային բացատրությամբ, արտահայտչական ու ոճական նրբերանգներով և բերում են օրինակներ, որոնք թույլ են տալիս նկատել բառերի զուգորդելիությունը համատեքստում:

Քննելով հայ և օտարագրի լեզվաբանների տեսակետները, նրանց կարծիքները հոմանիշության վերաբերյալ, դրանք բաժանել ենք չորս խմբի.

---

<sup>3</sup> **Diderot et d’Alembert** Encyclopédie ou Dictionnaire raisonné des sciences, des arts et des métiers, 1751-1772.

<sup>4</sup> **Bailly R.** Dictionnaire des synonymes de la langue française. P., 1947.

<sup>5</sup> **Bar E. D.** Dictionnaire des synonymes. P., Ed. Garnier Frères 1967.

<sup>6</sup> **Noter R. de, Vuillermoz P., Lécuycer H.** Dictionnaire des synonymes. Répertoire des mots usuels ayant un sens semblable, analogue ou approché. P., PUF, 1956.

<sup>7</sup> **Genouvrier E., Désirat C., Hordé T.** Nouveau dictionnaire des synonymes. P., Larousse, 2000.

- 1) Առաջին խմբի ներկայացուցիչները (Ս.Ուլման, Ռեյ Դրբով և ուրիշներ) հոմանիշների ըմբռնման հիմքում դնում են հոմանիշների իմաստային նույնության սկզբունքը :
- 2) Երկրորդ խումբը ( Յ.Բենակ, Ա.Ռեֆորմատսկի, Բերտո դյու Շագո և ուրիշներ) հոմանիշներ են համարում մոտ իմաստ ունեցող բառերը :
- 3) Երրորդ խմբի լեզվաբանները ( Օ.Ախմանովա, Ցոլ.Ապրեսյան, Լ.Բուլախովսկի) հոմանիշների սահմանման հարցում միջին դիրք են գրավում : Այս խմբի լեզվաբանները հոմանիշներ են համարում նույն կամ մոտ իմաստ ունեցող բառերը :
- 4) Իսկ որոշ լեզվաբաններ ( Բ.Լամիգե, Ս.Պլու, Բ.Վիկտորի, Պ.Գիրո, Ա.Սովաժո, Ֆ.Ամիել), որոնք ներկայացնում են արդի լեզվաբանությունը (4-րդ խումբ) գտնում են , որ հոմանիշությունը երկու հոմանիշ բառերի կամ արտահայտությունների միջև գոյություն ունեցող հարաբերություն է :

Ամփոփելով առկա տեսակետները, առաջարկում ենք հոմանիշության հետևյալ սահմանումը. **հոմանիշներ պետք է համարել այն բառերն ու կայուն բառակապակցությունները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, արտահայտում են համարժեք հասկացություններ, միմյանցից տարբերվում են ռճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև այլ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ :**

Այս սահմանումը, մեր կարծիքով, համապատասխանում է ֆրանսերենի զարգացման արդի փուլին և բավարարում է հոմանիշների թե՛ իմաստաբանական, թե՛ ռճաբանական պահանջները:

Ժամանակակից ֆրանսերենում հոմանիշային նորաբանության ընդհանուր բնութագիրը տալու համար ուսումնասիրության առարկա դարձնելով զաղափարանիշ, հուզական և ռճական հոմանիշ-նորաբանությունները, եկել ենք հետևյալ եզրակացության.

- 1) Հոմանիշի տարբերությունը հաճախ դրսևորվում է նրա ցույց տված հատկանիշի տարբերությամբ.
- 2) Գաղափարանիշ հոմանիշներն առաջանում են հիմնականում քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում: Դրանք առկա են նաև միջանձնային հարաբերություններում.

**veinard** adj. – chanceux

**cocktail** m. - mélange ( inattendu, dangereux)

**escalade** f. - augmentation, montée rapide

- 3) Գաղափարանիշ հոմանիշները հաճախ տարբերվում են հասկացության ուժգնության չափով.

**violent** adj. – difficile

**poids** m. – influence



- 4) Գաղափարանիշ հոմանիշության առանձնահատկություն կարող է դիտվել քաղաքական պատշաճ մտածելակերպի արտացոլումը.  
**globalité** f. - totalité f.  
**mariage** m. - symbiose f., union (écon.)
- 5) Հուզական հոմանիշները տարբերվում են չեզոքներից ընդհանուր հասկացական-տրամաբանական միջուկի պայմաններում գնահատողական բաղադրիչի առկայությամբ.  
**enfer** m. (հուզական) – crise (չեզոք),  
**ringard** adj. (հուզական) – démodé (չեզոք)
- 6) Իմաստային և ոճական հոմանիշների միջև անանցանելի սահման չկա, դրանցից մեկը երբեմն կարող է ձեռք բերել մյուսի հատկանիշը: Բարբառային շատ բառեր, որոնք գործածական են և հասկանալի գրական լեզվով խոսողներին, թափանցում են գրական լեզու, թեև գրականում առկա են նույն իմաստն ունեցող բառեր: Այսպիսով վերջիններս վերածվում են ոճական հոմանիշների:

Երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Ժամանակակից ֆրանսերենի ոճաբանական բնութագիրը», նույնպես ունի չորս ենթաբաժին և ներկայացնում է այն փոփոխությունները, որ այսօր առկա են ֆրանսերենի լեզվախոսական ոճերի տրոհման մեջ, ինչպես նաև հոմանիշային շարքի ու հիմնաբառի խնդիրը, հարանշանակության տեսության արդի կարգավիճակը՝ նորաբանական հոմանիշների հարանշանակային առանձնահատկությունների տեսանկյունից:

Նախ ճշտենք, թե ինչ ենք հասկանում «**լեզվախոսական ոճ**» ասելով:

Ֆերդինանդ դը Սոսյուրի langage – langue - parole շարքի langage-ը, որ մինչ օրս թարգմանվում էր որպես «խոսողական գործունեություն»<sup>8</sup> կամ «խոսքային գործունեություն»<sup>9</sup>, այսօր վերածնակերպվել է և ստացել «լեզվախոսություն» անվանումը:

Ահա թե ինչ է գրում Ֆերդինանդ դը Սոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» նշանավոր աշխատության թարգմանչուհի և առաջաբանի հեղինակ Ամալյա Մուրադյանը.

«Եթե հայերենն ունի langue-ի համար «լեզու» և parole-ի համար «խոսք» համարժեք տերմինները, ապա langage-ի դեպքում, որը Սոսյուրի պատկերացմամբ նրանց երկուսի միասնությանն է համապատասխանում, անհրաժեշտ էր համարժեք տերմին գտնել:...

<sup>8</sup> **Ջահուկյան Գ.** Լեզվաբանության պատմություն, Երևան, 1962, հ. 2, էջ 80:

<sup>9</sup> **Նազարյան Ա.** Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993, էջ 268:

Երկար մտորումներից և այլ տարբերակներ քննարկելուց հետո որոշեցինք հայերեն թարգմանությունում օգտագործել մեր լեզվում արդեն գոյություն ունեցող մի բառ, որն իր ներքին ձևով և գրաբարյան (խոսելու ձիրք, կարողություն) արժեքով կարծես համապատասխանում է Սոսյուրի կողմից langage-ի մեջ ներդրված իմաստին: Խոսքը «լեզվախոսություն» բառի մասին է, որին առաջարկում ենք երկրորդ կյանք տալ՝ սոսյուրյան langage - ին համարժեք: <sup>10</sup>

Լեզվի ոճաբանական տարբերակմանը կողմնակից բոլոր հեղինակները (Օ. Սովաժո, Մ.Կ. Մորեն, Ն.Ն. Տետերևնիկովա, Ջ.Ի. Խովանսկայա, Յու.Ս. Ստեպանով և այլք) ընդունում են նորմատիվ լեզվի (չեզոք ոճի), բարձր (գրքային, գրական, հրապարակախոսական, պաշտոնական-գործնական, գիտական) և ցածր ոճերի (խոսակցականի տարբեր աստիճաններ) առկայությունը: Վերջիններիս շարքում երբեմն առանձնացնում են ծածկաբանությունները և մասնագիտական ժարգոնը: Նման բարդ մոտեցումը պայմանավորված է լեզվի հարատև գարգացմամբ, ինչը կապված է ինչպես արտաքին (գիտատեխնիկական առաջընթաց), այնպես էլ ներքին (լեզվական) գործոնների և, համապատասխանաբար, ոճական համակարգի շարունակական փոփոխման հետ: Օրինակ, ֆաբսի և էլեկտրոնային փոստի ի հայտ գալը փոխում է մեր պատկերացումը մանակագրական ոճի, իսկ հեռուստատեսության ի հայտ գալը՝ պաշտոնական ոճի մասին:

Նախկին տարածքային տարբերությունները (Փարիզի հակադրումը ժայրամասին) փոխարինվում են ավելի փոքր մասշտաբի սոցիալ-տարածքային տարբերություններով (խոշոր քաղաքների ժայրամասերի հակադրումն ավելի բարեկեցիկ թաղամասերին): Հասարակության արդի շերտավորումն ավելի շատ ժողովրդագրական, իսկ երբեմն էլ մասնագիտական բնույթ ունի: Առավել հաճախ են հաշվի առնվում տարիքային պատկանելությունը՝ langue des jeunes (երիտասարդների լեզու), français scolaire (դպրոցական ժարգոն), ծագումը, որը ենթադրում է ոչ միայն սոցիալական, այլ երբեմն նաև ազգային պատկանելություն, կրոնական դավանանք:

Նորաբանությունների հանրալեզվաբանական քննության տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երիտասարդների լեզուն (le langage «jeune», le langage des jeunes): Նրանց լեզվախոսությունն ապացուցում է, որ բառապաշարի հարստությունն ամենից ավելի ընդգծված արտահայտվում է իրենց առօրյա կյանքին ու խնդիրներին, հետաքրքրություններին ու փոխադարձ շփումներին վերաբերող ոլորտներում: Բնական է նաև, որ հենց այստեղ են երևան գալիս ամե-

---

<sup>10</sup> **Սոսյուր Ֆ.** Ընդհանուր լեզվաբանության դասընթաց: Ֆրանսերենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Անալյա Մուրադյան, Երևան, 2008, XIX-XX:

նամեծ թվով հոմանիշներ: Նոր բառերի ու արտահայտությունների շարունակական հորինումն ամենից առաջ նախորդների վաղանցիկության արդյունք է:

Եվ իրոք, լրատվամիջոցների, ինչպես նաև երիտասարդների՝ իրենցով սահմանափակված շրջանակներից դուրս գալու, հասարակական այլ խմբերի՝ չափահասների ու տարեցների հետ շփվելու, դպրոցում և ընտանիքում մյուսների հետ հաղորդակցվելու շնորհիվ նորաբանություններն արագ տարածվում են՝ դուրս գալով հանրային այս կամ այն խմբի սահմաններից որոնցում կերտվել են և աստիճանաբար կորցնում նորահայտ լինելու կնիքը, որ ունեին ստեղծման պահին:

Երիտասարդների լեզուն (լեզվախոսական ոճը) սովորաբար հանդիպում է ավաններուն: Ահա այդ լեզվաոճին պատկանող մի քանի օրինակ, որոնց գործածությունը տարածված է խոսակցական ֆրանսերենում. *kiffer* - *aimer* (սիրել), *mortel* - *beau, bon* (լավ, գեղեցիկ), *pompe* – *chaussure* (կոշիկ) և այլն:

Այս լեզվախոսական ոճը երիտասարդների համար իրենց ինքնությունն ու անհատականությունն արտահայտելու, ինչպես նաև հանրային պատկանելությունը շեշտելու միջոց է: Ահա թե ինչու վերջին տարիներին այն ավելի ու ավելի է գրավում լեզվաբանների ուշադրությունը: Արդարև, երիտասարդների կենսակերպն ու խոսելաձևը արտացոլում են նրանց հանդգնումները, նրանց որդեգրած արժեհամակարգն ու սոցիալ-մշակութային նորմերը: Միաժամանակ, երիտասարդների լեզուն դիտվում է որպես խոսակցական ֆրանսերենի բառապաշարը համալրող էական աղբյուր: Հետևապես, որոշ լեզվաբանների համար երիտասարդները դառնում են լեզվի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկը: Իսկ դա մշանակում է, որ երիտասարդների լեզվախոսության ուսումնասիրությունը նաև այս կամ այն չափով նպաստում է համազգային լեզվի զարգացման որոշ միտումներ բացահայտելուն:

Գոյություն ունեն երիտասարդների զանազան խմբեր, որոնք միմյանցից տարբերվում են հագուստով, սանրվածքով, շարժումով, դիմախաղով, պահվածքով և, անշուշտ, խոսելաձևով: Ու թեև այդ խմբերին պատկանող երիտասարդները գործածում են իրենց յուրահատուկ բառեր ու արտահայտություններ, նրանց խոսքին բնորոշ է մեկ ընդհանուր առանձնահատկություն, այն է՝ ծածկաբանական, բառախաղային և ինքնությունը հաստատող լինելը:

Հետաքրքիր է մշել Ֆ.Բյուլոնոյի հիշատակած հետևյալ օրինակը, որը ցույց է տալիս, թե ինչպես է երիտասարդ տղամարդը նույն միտքն արտահայտելու համար ըստ իրադրության դիմում խոսքային այս կամ այն տարատեսակին հատուկ արտահայտչամիջոցների: Նրանից գողացել են ժամացույցը: Առաջին պահին նա ասում է. *On m'a fait ma montre»* (ժամացույցս *տարան*), ոստիկանության բաժանմունքում նա պատմում է.

«Monsieur le commissaire, il y a vingt minutes qu'on m'a volé ma montre» (պարոն ոստիկանապետ, քսան րոպե առաջ ժամացույցս *գողացան*), այնուհետև կնոջը պատմում է.«On m'a chipé ma montre» (ժամացույցս *բռնցրին*) և երեկոյան, երբ բարկությունն անցել է և հանդիպել է ընկերոջը, կատակում և ասում է.«Imagine-toi, ce matin on m'a subtilisé la montre au métro» (պատկերացրու, որ այս առավուտ մետրոյում ժամացույցս *ցրեցին*):

Եվ այսպես, հաճախ անգամ մեկ նախադասության մեջ կարելի է տեսնել գրական ու գիտական բառեր, փոխառություններ ու զռեհկաբանություններ, հասարակաբանություններ, ծածկաբանություններ, այսինքն՝ կանոնական ու ոչ-կանոնական արտահայտչամիջոցների մեկը մյուսի կողքին:

Հարկ է նշել, որ արտահայտչականությունը երիտասարդների խոսքը միավորող սկզբունք է: Իրենց հուզական հոգեվիճակը հաղորդելու համար արգոյով արտահայտվողները խոսքը հագեցնում են այլևայլ նշանակցումներով (հավելիմաստներով): Երիտասարդների յուրաքանչյուր սերունդ որևէ նոր բան է ավելացնում բառապաշարին և հրաժարվում ժամանակավրեպ արտահայտություններից, մի երևույթ, որ գնալով հաճախադեպ է դառնում:

Ավելացնենք, որ արվարձանային երիտասարդության լեզուն ավանդական արգոյից տարբերվում է փոխառությունների առատությամբ: Խոսքը, նախ և առաջ, արաբերենից և անգլերենից փոխառությունների մասին է: Եթե արաբերեն բառերը թափանցում են արաբախոս ներգաղթյալների հետ երիտասարդների շփման ընթացքում, ապա անգլիաբանություններն առավելապես լրատվամիջոցների ազդեցության հետևանք են: Անգլերեն բառերի գործածությունը միշտ դիտվել է երիտասարդներին բնորոշ երևույթ:

Քննության առարկա ենք դարձրել նաև հոմանիշների շարքը, և նրա գոյության կարևոր չափանիշ ընդունելով **իմաստաբանականը**, գտնում ենք, որ այս չափանիշի հետ սերտորեն կապված է մեկ այլ չափանիշ և՛ **փոխադարձ փոխարինելիությունը** :

Իմաստաբանական միավորների հարաբերությունները բնութագրելու համար օրինակ բերենք sec և froid ածականները, որոնք մասնակի հոմանիշներ են որոշակի համատեքստում, ինչպես sourire sec և sourire froid-ում, բայց ոչ un temps sec և un temps froid արտահայտություններում:


Հոմանիշների շարքին զուգընթաց, ոմանք ընդունում են նաև հոմանիշների լայնույթի (ամպլիտուդա) գոյությունը: Վերջինս հոմանիշների սովորական շարքից տարբերվում է նրանով, որ լայնույթի անդամները տարբերվում կամ հեռանում են աստիճանաբար, հաճախ միջանկյալ օղակների միջոցով, այսինքն՝ հոմանիշները շարքի գլխա-

բառից կամ մյուս անդամներից կարող են իմաստային որոշ աստիճանականությամբ հեռանալ կամ տարբերվել:

Յոմանիշների էլեկտրոնային բառարանում (DES, <http://www.crisco.unicaen.fr/cgi-bin/cherches.cgi>) Ս.Պլուև և Բ.Վիկտորին առաջարկում են հոմանիշության ուսումնասիրության գծանկարային մեթոդը՝ հոմանիշային շարքում առանձնացնելով հենաբառը (կամ դոմինանտը, գլխաբառը):<sup>11</sup> Քննենք *sec* (չոր) բառի հոմանիշային շարքը.

*sec* (չոր) – *stérile* (ստերջ) – *aride* (չոր, երաշտային) – *maigre* (նիհար) – *décharné* (հյուճված) – *austère* (խիստ) – *rude* (կոպիտ) – *brusque* (բիրտ)

*Sec* բառի հոմանիշային շարքում տեսնում ենք մեկ գլխաբառ, որն այնուհետև բաժանվում է 2 ճյուղի.



Ինչպես նշեցինք, հոմանիշների շարքում միշտ չէ, որ դյուրությամբ լուծվում է հենաբառի ընտրության հարցը: Երբեմն դժվար է կողմնորոշվել և ընտրել իր բոլոր հատկանիշներով ընդունելի և հարմար հենաբառ, նամանավանդ, երբ որպես այդպիսին կարող են հանդես գալ մեկից ավելի հոմանիշներ, որոնք հոմանիշային շարքում այս կամ այն չափով հավասարաթեք են :

**Crime** - assassinat, atrocité, cas, empoisonnement, espionnage, fraude, trahison, turpitude, viol, vol.

Վերոհիշյալ օրինակում ( *sec* ...) լայնույթը արտահայտված է երևույթների կամ հատկանիշների աստիճանականության (զրադացիա)

<sup>11</sup> **Ploux S., Victorri B.** Construction d'espèces sémantiques à l'aide de dictionnaires de synonymes. Traitement Automatique des Langues 39(1), 1998.

շնորհիվ, պայմանավորված է հոմանիշային շարքի լայնույթի աստիճանական զարգացմամբ և կարող է արտահայտվել հոմանիշների շարքի մեջ մտնող բառերի իմաստային, ինչպես նաև ժանրային և ոճական այլ տեսակներով.

**Peureux** - affolé, angoissé, péteux, pétochard, pleutre.

**Rouge** - amarante, bordeaux, pourpre, tomate, vin, sang, coloré, grenat.

Կարող ենք եզրակացնել, որ լայնույթի շնորհիվ հիմնականում արտահայտվում են հոմանիշային շարքում առկա հետևյալ առանձնահատկությունները.

ա/ Հոմանիշների շարքում հարևան անդամներն իմաստով ավելի մոտ են. camarade-ami, douter-hésiter, garer-ranger.

**Camarade** – **ami** – copain (fam.) – pot (fam.) –  
connaissance – compagnon – collègue – confrère.

բ/ Հոմանիշների շարքում գլխաբառից հեռացած բառերը իրենց իմաստով այնքան են շեղվում նրանից, որքան հեռու են գտնվում. **friandise** – plaisir, **douleur** – ennui, **fragment** – éclat.

**friandise** – sucrerie – bonbon – confiserie – **plaisir** (fig.) – amusement.

գ/ Հոմանիշների շարքում լայնույթի ծայրագույն անդամները շարքի մյուս անդամների համեմատությամբ իմաստային և այլ հատկանիշներով (ոճական) ավելի հեռու են և դրանով էլ դրանք մոտ հոմանիշներ չեն դառնում.

aube – robe - rochet, chou - mignon, main - pouvoir, pot - bonheur.

Այսպիսով, ֆրանսերենի նորակազմություններն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ հարանշանակությունը դրանցում մեծ դեր է խաղում: Երբեմն հենց հարանշանակությունն է հիմք դառնում բառապաշարային միավորի ստեղծման համար: Հարանշանակությունը մարդակենտրոն է և արտացոլում է աշխարհի ազգամշակութային պատկերն այնպիսին, ինչպիսին վերջինս ընկալվում է ժամանակակից ֆրանսիացու կողմից: Այս աշխարհընկալման մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հասարակական-քաղաքական հայացքները ինչպես համազգային (քաղաքական բարեկիրթ մտածելակերպ, հասարակական խնդիրների հանդեպ ֆրանսիական հասարակության շահագրգիռ ուշադրություն), այնպես էլ առանձին վերցրած տարածքի՝ cité-ի մասշտաբով (տարասեռ ազգային պատկանելություն):

Երրորդ գլուխը, որ վերնագրված է «Ղոմանիշային նորաբանությունների առաջացման եղանակները», ամփոփում է հոմանիշային նորաբանությունների աղբյուրներն ու դրանց կազմության եղանակները:

20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարասկզբին նորաբանությունների կազմության արդյունավետությունը ֆրանսերենում նկատելի է երեք հիմնական եղանակների միջոցով՝ բառիմաստի փոփոխություն, բառակազմություն լեզվում գոյություն ունեցող բառերի և ձևայինների հիման վրա և փոխառություն: Նշյալ եղանակներից ֆրանսերենի միջազգային խորհուրդը (Conseil International de la Langue Française, CILF) նախընտրում է բառակազմությունը՝ հիմնված ձևաբանական տարրերի վրա:

Քննելով բառարաններից ընտրված նորաբանական հոմանիշները վերջիններիս կազմության եղանակների տեսանկյունից [Robert, Rey, Rey-Debove 2000]<sup>12</sup>, [DMC – Gilbert 1991]<sup>13</sup>, [Caradec 1996]<sup>14</sup>, [DFNC - Cellard, Rey 1991]<sup>15</sup>, [Compil 1994]<sup>16</sup>, [Branché – Merle 1989]<sup>17</sup>, [Céfrans - Seguin, Teillard 1996]<sup>18</sup> և բաշխելով ընտրված բառերն ըստ կազմության եղանակի՝ ստանում ենք հետևյալ պատկերը.

բառակազմություն - 34,7%

փոխառություն - 7,6%

նշանակության փոփոխություն - 57,7 %

Ինչպես տեսնում ենք փոխառությունը նորաբանությունների առաջացման մյուս աղբյուրների համեմատությամբ ունի ավելի ցածր տոկոսային ցուցանիշ: Առաջին հայացքից ակնհայտ է որոշ հակասություն, քանի որ ժամանակակից ֆրանսերենում հատկապես փոխառություններն են որոշակի գնահատանք հաղորդում հասարակական կարծիքին վերաբերող նորաբանություններին, որոնց կիզակետում են ազգային հետաքրքրությունները: Ուստի, ըստ ստացված տոկոսային հարա-

---

<sup>12</sup> **Robert P., Rey. A., Rey-Debove J.** Le Nouveau Petit Robert. Dictionnaire alphabétique et analogique de la langue française. P., 2000 .

<sup>13</sup> **DMC. Gilbert P.** Dictionnaire des mots contemporains. P., Les Usuels du Robert, 1991.

<sup>14</sup> **Caradec F.** N'ayons pas peur des mots. Dictionnaire du français argotique et populaire. P., Larousse, 1996.

<sup>15</sup> **DFNC. Cellard J., Rey A.** Dictionnaire du français non-conventionnel. P., Hachette, 1991.

<sup>16</sup> **Compil** - Nouveau français : la compil. Petit Dico des mots interdits aux parents. Demougeot M., Duvillard J., Laurioz H., Marcoz L., 1994.

<sup>17</sup> **Merle P.** Dictionnaire du français branché suivi du guide du français tic et toc. P., Editions du Seuil, 1989.

<sup>18</sup> **Seguin B., Teillard F.** Les Céfrans parlent aux Français. P., 1996.

բերությունների, փոխառությունների ներմուծումը ֆրանսերեն այսօր կարծես դիմադրության է հանդիպում: Սակայն այս պարագայում փոխառությունների ցածր տոկոսային ցուցանիշը բացատրվում է նորաբանությունների ընտրության չափանիշներով: Լեզուն առաջին հերթին փոխառում է ոչ թե հոմանիշներ, այլ նոր բառեր՝ նոր իրողություններին անվանումներ տալու համար՝

- e-mail** m. – անգլ. (էլեկտրոնային փոստ),
- bandana** m. - հինդի (փոքրիկ, քառակուսի, դրոշմանախշ գլխաշոր),
- glasnost** m. - ռուս. (հրապարակայնություն),
- airbag** m. - անգլ. (զսպաբարձիկ) և այլն:

Ֆրանսերենի բառապաշարի համալրմանը հետևող հատուկ մարմինները, մասնավորապես Ֆրանսիական Ակադեմիան, օտար բառամիավորների դիմաց առաջարկում են ֆրանսերեն համարժեքներ, որոնց մի մասը ընդունվում է հանրության կողմից.

- broker** m. - **courtier**
- fast-food** m. - **prêt à manger**
- tie-break** m. - **jeu décisif** և այլն:

Սակայն քիչ չեն դեպքերը, երբ ֆրանսերեն համարժեքի առաջ քաշումն արհեստական բնույթ է կրում:

Այսպիսով, հոմանիշային նորաբանությունների առաջացման հիմնական աղբյուրները մնում են բառերի իմաստային զարգացումը (ներբառային իմաստային բառաբարդում) և բառակազմությունը:

Հոմանիշային նորաբանությունների մեծամասնությունը (մոտավորապես 57,7%) առաջանում է իմաստային փոփոխությունների արդյունքում՝ ձևի պահպանման պայմաններում, ինչը բացատրվում է լեզվական միջոցների տնտեսման միտումով:

Ակնհայտ է պատկերավոր փոխաբերության դերը, որը հաճախ օժտված է գնահատողական հարանշանակությամբ (հավելիմաստով), մեծամասամբ բացասական՝

- constipé** adj. - «փորկապ ընկած, փորկապով տառապող», որ ստացել է boudeur «մռայլ, դժգոհ» իմաստը,
- auge** f. - «կերակրատաշտ», որը գործածվում է assiette «ափսե» իմաստով,



**gras** adj. - «գեր, չաղ, ճարպոտ», որը գործածվում է bénéficié «շահույթից ուռած, ուռճացած» իմաստով:

Փոխաբերության հիմքում ընկած համեմատություն կարող են դառնալ գունային զուգադրումները՝

**banane** f. – médaille,  
ծևը՝ **Hexagone** m. – France,  
արդյուքը՝ **juteux** adj. – lucratif :

Փոխաբերությունների վառ պատկերավորությունն ավելի ակնհայտ է ցածր ոճում, օրինակ՝

**airbags** m. pl. «անվտանգության բարձիկներ մեքենայում» և **amortisseurs** m. pl. «հարվածամեղմիչ, բուֆեր» բառերը խոսակցական ցածր ոճում գործածվում են «seins, կնոջ կրծքեր» իմաստով,  
**zapper** v.i. «հեռուստատեսային ալիքները փոխել հեռակառավարման վահանակի միջոցով» բայը ստացել է «bouger, տեղից շարժվել» իմաստը:

Մեր հետազոտության ուղղվածությանը համապատասխան առանձնացնում ենք բառակազմության հետևյալ հիմնական միջոցները.

- ❖ **Բառածանցում**
  - ածանցում (մախածանցում, վերջածանցում, ներածանցում)
  - հարահամադրական կազմություններ (formations parasynthétiques)
- ❖ **Բառահատում** (apocope, վերջատում, վերջնավանկի անկում) և aphérèse (սկզբնավանկի անկում)
- ❖ **Բառաբարդում** (composition)
- ❖ **Փոխանցում, փոխակարգություն** (conversion)
- ❖ **Բառաձուլում** (mot-valise)
- ❖ **Բնածայնություն** (onomatopée)

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Նորաբանությունների առաջացումը խոսում է լեզվի կենսունակության, արտալեզվական իրողությունների հետ բառապաշարի

համապատասխանեցման, իսկ հոմանիշությունը՝ լեզվի հարստության, նրա ներքին պահանջների և իմաստային ու ոճական արտահայտչամիջոցների զարգացման մասին:

2. Հոմանիշությունը բնորոշ է լեզվի իմաստակիր բոլոր միավորների: Այն վերաբերում է բառապաշարին, դարձվածաբանությանը, քերականությանը, ոճաբանությանը: Սակայն լեզվական հանընդհանուր երևույթ լինելով հանդերձ հոմանիշության դրսևորման ձևերը, առաջացման ու զարգացման օրինաչափությունները տարբեր են այլևայլ լեզուներում:
3. Լեզվախոսական նոր ոճերի հայտնվելը ֆրանսերենում ստեղծում է նոր ոճական պատկեր, ուր հաշվի են առնվում ժողովրդագրական գործոնները (ծագումը, ազգությունը, հավատքը), ինչպես նաև անձի մասնագիտական ու սոցիալական պատկանելությունը:
4. Լեզվախոսական ոճերն ավանդաբար ընդունված գործառական ոճերից (առօրյա-խոսակցական, գիտական, հրապարակախոսական, վարչական, զրական և այլն) տարբերվում են նրանով, որ մատնացույց են անում դրանցից յուրաքանչյուրի տարատեսակները, այսինքն՝ դրանց ենթաօճերը, այսպես կոչված «լեզվական ռեգիստրները» (registres de langue), որոնցից սույն հետազոտության հիմնական նյութ են դարձել խոսակցական ֆրանսերենի ենթաօճերը (langue des jeunes, langue des faubourgs et des banlieues, langue des cités, langues des immigrés, langage scolaire և այլն), որոնք ակնբախորեն արտացոլում են խոսակցական ֆրանսերենի բազմաշերտությունը: Այս ոլորտներում երևան եկած բառապաշարային նորաբանությունների ուսումնասիրության շնորհիվ ի հայտ են գալիս ֆրանսերենի հոմանիշային շարքերում կատարված (և կատարվող) իմաստային ու ոճական տեղաշարժերը:
5. Ժամանակակից ֆրանսերենում ոճականորեն ցածր բառերի խմբին է պատկանում հիմնականում երիտասարդության և հասարակության սոցիալապես ստորին շերտերի, մասնավորապես ներգաղթյալների բառապաշարը, որն արտացոլում է սոցիալ-տնտեսական խնդիրներն ու այն իրավիճակները, որոնցում այսօր գտնվում է ֆրանսիական հասարակությունը: Ոճական առունով ստորին բառապաշարի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել վերջինիս բնորոշ միտումները՝ արագ զարգացում, հարուստ հոմանիշություն, ինչպես նաև վաղանցիկություն ու նորանոր արտահայտչամիջոցների ստեղծում, որոնք մշտապես լրացնում են եղածները կամ փոխարինում դրանց, քանի որ նորակազմ շատ բառամիավորներ տարածվելով ընդգրկվում են լեզվագործածության հոսընթացի մեջ, աստիճանաբար կորցնում

են արտահայտչականությունն ու դառնում պայմանական նշաններ, որոնց փոխարինելու են գալիս նորերը: Այստեղ պարզորոշ ի հայտ է գալիս լեզվական նշանին արտահայտչական ուժ հաղորդելու միտումը, որը լեզվի զարգացման կարևորագույն գործոններից մեկն է: Եվ ըստ այն բանի, թե ինչպես են բառերը, քերականական ձևերն ու կառույցները աստիճանաբար կորցնում արտահայտչականությունը, լեզվակիրներն ավելի ու ավելի են զգում դրանց նորացման ու թարմացման անհրաժեշտությունը:

6. XX դարի երկրորդ կեսին և XXI դարասկզբին ֆրանսերենում երևան եկած բառային նորակազմությունների զգալի մասը վերաբերում է ոճական առումով ստորին բառապաշարին (բացառում ենք գիտատեխնիկական եզրաբանությունը): Նկատելի է կանոնական ոճի ընդհանուր նվազում, լեզվական ստորին ոլորտում (ցածր ոճերում) առաջացած նորաբանությունների արագ ընկալում ողջ հանրության կողմից և վերջիններիս ամրագրում հատուկ բառարաններում: Իսկ դրանց հանրայնացումը հաստատող գլխավոր չափանիշը վերջիններիս մուտքն է ֆրանսերենի ընդհանուր բացատրական բառարաններ (Le Robert, Larousse, Hachette և այլն):
7. Այսօր գրավոր խոսք են թափանցում խոսակցական բառեր, հասարակաբանություններ, ծածկաբանություններ և անզամ գռեհիկ, կոպիտ, անպարկեշտ բառեր ու արտահայտություններ: Բնական է, որ ժամանակակից գրողն իր ստեղծագործություններում չի կարող հասարակության տարբեր շերտերի կամ խավերի ներկայացուցիչներին «խոսեցնել» բարձրաճ գրական կամ նույնիսկ սովորական կանոնական լեզվով: Զուգահեռաբար ակնհայտ է դառնում, որ մերօրյա ֆրանսիացին պասիվ կերպով տիրապետում է մի քանի «ֆրանսերենի», ինչը նրան թույլ է տալիս հասկանալ ցանկացած լեզվախոսական ոճով արտահայտված խոսքը և դիմել դրանցից որևէ մեկին հաղորդակցական իրավիճակից ելնելով, թեև վերջինիս ակտիվ կիրառումը նրա համար պարտադիր չէ:
8. Հստակ ուրվագծվում է այն իրողությունը, որ ժամանակակից ֆրանսերենի ոճերի միջև սահմանները գնալով աղոտանում են, որ նկատելի է ոճական աստիճանական պարզեցում: Ցածր ոճերի (կամ բառապաշարի ստորին շերտին պատկանող ոճերի) սահմանազատման դժվարությունը գործնականում հաստատվում է նաև բառարանագիրների մոտ, տարբեր բառարաններում միևնույն բառն այս կամ այն լեզվախոսական ոճին վերագրելու տարբերությունների մեջ:

9. Այսպիսով, անժխտելի է այն փաստը, որ արդի ֆրանսերենում ձևավորվել են գործառական նոր ենթառճեր, որոնց յուրահատուկ բառամիավորները թափանցում են խոսակցական ֆրանսերեն և վերջինիս միջոցով նաև կանոնական (նորմատիվ) բառապաշար ու գրական լեզու՝ հարստացնելով հոմանիշային շարքերը իմաստային-ոճաբանական նորանոր երանգներով ու պատկերավորությամբ:

Գրականության ցանկում ներկայացված են հետազոտության համար մեր կողմից ուսումնասիրված գիտական գրականության, բառարանների և էլեկտրոնային կայքերի տվյալները:

\*\*\*

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Հոմանիշային բառարանագրության ստեղծումը Ֆրանսիայում և հոմանիշային տեսության զարգացումը // Արդի բանասիրության հիմնախնդիրները, Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, Երևան, «Լինգվա» հրատ., 2006, պրակ 5, էջ 63-67:
2. Ածանցավոր նորակազմությունները և բառաիմաստային տեղաշարժերը ժամանակակից ֆրանսերենում // Ասողիկ 1(26), Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 99-102:
3. Հոմանիշային նորաբանության զարգացման ընդհանուր բնութագիրը արդի ֆրանսերենում // Հայ-ֆրանսիական լեզվամշակութային առնչություններ, Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումների շրջանակներում կազմակերպված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Լինգվա» հրատ., 2008, էջ 114-123:
4. Հոմանիշության իմաստաբանական չափանիշների մասին // Ասողիկ1(46), Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 61-64:
5. Դարձվածաբանական հոմանիշներն ու դարձվածաբանական տարբերակները ժամանակակից ֆրանսերենում // «Le Miroir Linguistique de l'Univers», Ֆրանկոֆոնիայի շաբաթվա շրջանակներում կազմակերպված 3-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Լինգվա» հրատ., 2012, էջ 64-70:
6. Փոփոխություններ ժամանակակից ֆրանսերենի լեզվախոսական ոճերի տրոհման մեջ // Օտար լեզուները Հայաստանում, Գիտամեթոդական հանդես, Երևան, 2013, համ. 3, էջ 3-11:

## ГРИГОРЯН АСМИК ГАЙКОВНА

### Социолингвистический анализ неологизмов и смещений в синонимических рядах в современном французском языке

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.08 «Романские языки».

Защита состоится 29 ноября 2013 г. на заседании специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском государственном университете (Ереван, Алека Манукяна 1)

## РЕЗЮМЕ

На современном этапе развития лингвистики языковые явления рассматриваются в связи с общими процессами, характерными для эволюции общества как сложной динамической системы. Высокая степень экстралингвистической детерминированности изменений многоуровневой системы языка, в частности лексического уровня, обуславливает актуальность лингвистических исследований в области неологии, представляющей бесспорный интерес.

**Выбор** темы настоящей диссертации обусловлен актуальными проблемами изучения социально–детерминированных стилевых регистров, в частности, распространения т.н. низкого стиля, являющегося одним из важных источников обогащения словарного состава современного французского языка.

**Цели и задачи** настоящего исследования определяются настоятельной необходимостью всестороннего социолингвистического анализа различных проявлений лексико-семантических особенностей молодежного социолекта, распространенного среди студентов, школьников, а также иммигрантской молодежи французских пригородов. В работе используются методы лингвостилистического и социолингвистического анализа исследуемого материала, а также сопоставительный анализ словарных дефиниций.

Научная **новизна** представленной работы заключается в новом освещении понятия стиливых регистров, основанного на триаде язык-речь-речевая деятельность в неразрывной связи с изучением предпосылок проникновения лексико-семантических неологизмов в разговорный стиль, приводящий к смещению амплитуды в синонимических рядах и возникновению новых лексических доминант.

**Теоретическое значение** состоит в дальнейшем изучении и уточнении проявлений синонимии с учетом особенностей низкого стиля, что позволяет по новому взглянуть на вопросы, связанные с возникновением новых языковых единиц, последующим расслоением стиливых регистров и коннотативных смещений.

**Практическое значение** заключается в возможном применении данных настоящего исследования при разработке специальных курсов по лексикологии и стилистике современного французского языка, а также в области практических работ по лексикографии.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии.

**Первая глава** посвящена всестороннему анализу обширной научной литературы в области истории изучения проблемы синонимии и лексикографии с точки зрения обогащения словарного состава современного французского языка.

**Во второй главе** рассматриваются проблемы стиливой дифференциации языка и коннотативных смещений в свете современных лингвистических учений.

**В третьей главе** исследуются различные предпосылки и источники возникновения лексических новообразований в синонимических рядах, а также особенности их языковой социализации.

**В заключении** представлены результаты проведенного исследования.

## Hasmik Grigoryan

### Sociolinguistic Analysis of Neologisms and Synonymic Shifting in Modern French

#### SUMMARY

The topic chosen for this dissertation is conditioned by its **actuality**, as linguistic-colloquial low styles, in particular with their various characteristics, have their indisputable role in the replenishment of the word-stock of Modern French. These styles form the core topic of this research, whilst continuously showing the need for further study, adjustment, and the ability to generalize.

The goal of this research is to represent the argo as comprehensively as possible, with its current perception and interpretation, its varieties (langue des jeunes - the language of youth, langue des banlieues et des faubourgs - the language of suburbs and countryside, langue des cités- the language of township, langue scolaire - the language of schoolchildren, langue branchée – a stylish language, langue des immigrés - the language of immigrants, etc.), to reveal the motivations of the expansion and dissemination of their usage in Modern French.

Scientific **novelty** of the given dissertation is the new interpretation of concepts of stylistic registers based on the trinity language - speech - verbal activity in the indissoluble tie with the study of the prerequisites of penetration of lexical - semantic neologisms into the spoken language. The latter shifts the amplitude in the synonymic series and gives rise to new lexical dominants.

The **theoretical value** of this dissertation is in the clarification of the problems discussed throughout the study of the low styles and in the narration of personal viewpoints. Thus, this research contributes to the modern lexicological and stylistic studies, and with the help of additional data it can enrich the interpretation of the theoretical problems relating to the synonymy. This may also enhance modern perceptions (understanding) of the mutual relation between the internal and external phenomena relating to the language.

The **practical value** of this research is in the possible usage of the raised provisions and factual data in the university textbooks for Lexicology and Stylistic, in handbooks, special courses and lectures on *synonymy* and *synonymic neologism*. It may also be used when developing or creating new word - lists and dictionaries of synonyms.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusion, bibliography of scientific resources, dictionaries and websites.

The **first chapter**, entitled “Word Synonymy and Synonymic Neologisms”, consists of four subchapters and tackles upon such important problems as synonymy

as initialization of the theory on synonyms and synonymic lexicography in France. It also covers viewpoints relating to the perception of synonyms in linguistics, to the semantic standards of synonymy and the general characteristics of synonymic neologisms in Modern French.

The **second chapter**, entitled “The Stylistic Characteristics of Modern French”, also has four chapters, showing the changes currently present in the splitting of styles in French. It also shows the problem of the synonymic line and the keyword, the current status of the theory on connotation from the perspective of the connotative peculiarities of new synonyms.

The **third chapter**, entitled “The Methods of Occurrence of Synonymic Neologisms”, sums up the sources of synonymic neologisms and the ways of their formation.

The **Conclusion** gives the summary of the results of the work done.

A handwritten signature in black ink, appearing to read "H. Grunf". The signature is written in a cursive, flowing style with a horizontal line underneath the name.